

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Աստղիկ Գևորգի Պողոսյանի Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Ֆինանսական վերահսկողության հիմնախնդիրները ՀՀ բուհերում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ֆինանսական վերահսկողությունը հանդիսանում է բուհերի կառավարման գործառույթների անբաժանելի, անհրաժեշտ ու կարևորագույն մասը: Կատարելով հասարակության համար չափազանց կարևոր գործառույթ և ձևավորելով որակյալ մարդկային կապիտալ՝ համալսարանների մեծ մասը, պետական աջակցությանը զուգահեռ, գործունեություն է ծավալում նաև առևտրային սկզբունքներով: Հետևաբար, ֆինանսական վերահսկողությունն իր առջև խնդիր է դնում ոչ միայն գնահատելու հանրային ֆինանսավորման նպատակային ծախսերը բուհերում, այլև դրանց արդյունավետ օգտագործման արդյունքների ներկայացումը բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների շահառուներին՝ պետությանը, համալսարանների վարչակազմին, ուսանողությանը, գործատուներին:

Երկար ժամանակ բուհերում վերահսկողության հիմնական գործառույթը բուհի ֆինանսական ռեսուրսների ժամանակին հավաքագրման ու ըստ նպատակայնության ծախսման մշտադիտարկումն էր՝ կանխարգելելու հնարավոր չարաշահումներն ու դրամական միջոցների անարդյունավետ օգտագործումը: Ներկայում, սակայն կարևորվում են նաև ֆինանսական վերահսկողության վերլուծական գործառույթները:

Բուհերի ֆինանսական վերահսկողության կարևոր ուղղություններից մեկը կրթավճարների չափի հիմնավորվածության դիտարկումն է: Ֆինանսական վերահսկողության տեսանկյունից տվյալ հիմնավորվածության դիտարկումն է: Ֆինանսական վերահսկողության տեսանկյունից տվյալ հիմնախնդրի լուծումը չափազանց կարևոր է, քանի որ ուռճացված կրթավճարները կամ դրանց արժեքից ցածր սահմանված վճարները լուրջ վնաս կարող են հասցնել բուհի ֆինանսական պաշարների ձևավորման կայունությանը: Ֆինանսական վերահսկողության ոլորտում վերանայումների կարիք է զգացվում ակադեմիական կրեդիտների կուտակման և հատկապես դրանց փոխանցումներից բխող ֆինանսատնտեսական գնահատումների գծով: Եթե մինչ այժմ ակադեմիական կրեդիտները վերահսկողության կողմից

դիտարկվում էին որպես ուսումնառության ծանրաբեռնվածության գնահատման միջոց, ապա շարժունության ներկա պայմաններում, ուսանողի՝ սովորելու ընթացքում բուհից բուհ տեղափոխվելը կրթական ծառայությունների ֆինանսավորման հիմնախնդիր է առաջացնում համալսարաններում:

Ընդհանրապես, բուհերում մատուցվող ծառայությունների առանձնահատկություններով պայմանավորված՝ գործունեության արդյունավետության, նպատակայնության և այդ հիմքի վրա՝ ֆինանսական ծախսումների արդյունքայնության գնահատումը բավականին բարդ խնդիր է հանդիսանում: Մյուս կողմից՝ այն խիստ արդիական ու կարևոր է: Ըստ այդմ, գրախոսվող ատենախոսությունը նվիրված լինելով վերը նկարագրված խնդիրների վերհանմանն ու դրանց լուծմանը միտված առաջարկությունների ձևակերպմանը, ձեռք է բերում իրական արդիականություն և կարևորություն:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել ՀՀ բուհերի ֆինանսական վերահսկողության գործող մեխանիզմները՝ վերհանելով դրանց բարելավման ուղիները: Ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել համալսարանների ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձը և ներկայացնել ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման հնարավորությունները,
- ✓ բուհերի ֆինանսավորման աղբյուրների շրջանակը որոշելիս հաշվի առնել համալսարանական գործունեության հանրային և մասնավոր շահառուների սպասումները,
- ✓ ներկայացնել կրթավճարների ձևավորման վերահսկողության մոտեցում հիմնված դիմորդի ֆինանսական սպասումների վրա,
- ✓ բացահայտել ուսման վարձերի փոփոխության պատճառահետևանքային կապերը ըստ ներքին և արտաքին միջավայրային ազդակների ազդեցությունների,
- ✓ ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացը դիտարկել ֆինանսական վերահսկողության տեսանկյունից՝ առաջարկելով կրեդիտների փոխանցման դրամային փոխակերպման համակարգ,

- ✓ մշակել ըստ պատասխանատվության կենտրոնների գիտակրթական գործունեության անբարենպաստ ֆինանսական շեղումների բացահայտման և նրանց հաշվապահական հաշվառման տեղեկատվական համակարգ,
- ✓ անընդհատության սկզբունքով ներկայացնել ներբուհական ֆինանսական հաշվետվողականության կազմակերպում՝ նպատակ ունենալով կանխարգելելու բուհի ֆինանսական ռիսկերի ձևավորումը՝ ըստ գիտակրթական գործունեության պատասխանատվության կենտրոնների:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը շարադրված է 116 էջ ծավալով, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը, արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Ֆինանսական համակարգի գործունեության առանձնահատկությունները համալսարաններում» գլխում ուսումնասիրվել են ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի զարգացման միտումները, հանրապետությունում մասնագիտական կրթական համակարգի ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձի ներդրման ուղիները, քննարկվել են ՀՀ բուհական համակարգում ֆինանսական վերահսկողության գործառույթների բարելավման հիմնախնդիրները:

Ատենախոսության երկրորդ՝ «Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման վերահսկողության շրջանակը բուհերում» գլխում դիտարկվել են ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման վերահսկողության հիմնախնդիրները, քննարկվել են բուհերում կրթավճարների ձևավորման ֆինանսական վերահսկողության մոտեցումները, նաև՝ ուսումնասիրվել են ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման ֆինանսական վերահսկողության հիմնախնդիրները:

Երրորդ գլուխը վերնագրված է «Ֆինանսական վերահսկողության կազմակերպման կատարելագործման ուղիները բուհերում»: Այստեղ հեղինակը քննարկում է բուհական համակարգում աուդիտի կազմակերպման հիմնախնդիրները, պատասխանատվության

կենտրոններով ֆինանսական վերահսկողության կազմակերպումը, նաև՝ բուհերում ֆինանսական վերահսկողության հաշվետվողականության տեղեկատվական ապահովման հիմնախնդիրները:

«Եզրակացություններ» բաժնում ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները:

Ատենախոսության արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Հետազոտության օբյեկտն է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսական համակարգն ու ֆինանսական վերահսկողության գործառույթների շրջանակը: Հետազոտության առարկան ՀՀ բուհերում իրականացվող ֆինանսական վերահսկողության գործընթացն է:

Ատենախոսությունը բարձրագույն մասնագիտական կրթության ծառայությունների ֆինանսական վերահսկողության մեթոդական մոտեցումների տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված հետազոտություն, որը ներառում է ՀՀ բուհական համակարգում ֆինանսական վերահսկողական նպատակադրումների և կազմակերպչական գործառույթների բարելավմանը միտված տեսական բնույթի առաջարկություններ:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, ներկայացված մոտեցումները և մեթոդները, հաջորդիվ լրամշակման պարագայում, կարող են կիրառություն գտնել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական համակարգում՝ նպաստելով բուհերում իրականացվող ֆինանսական գործառույթների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև համալսարանների ֆինանսական ռեսուրսների օգտագործման մշտադիտարկման բարելավմանն ու նրանց կողմից իրականացվող կառավարչական որոշումների ընդունման կատարելագործմանը:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Հետազոտության հիմնական արդյունքները հեղինակն առանձնացրել է գիտական նորույթի հավակնություններ ունեցող հետևյալ կետերում.

1. հիմնավորվել է ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը՝ ներդաշնակություն

սահմանելով բուհերի կայուն ֆինանսական գործունեությանն առնչվող հանրային և մասնավոր շահառուների սպասումների, ինչպես նաև կրթական ծառայությունների մատուցման շուկայում ձևավորվող առաջարկի և պահանջարկի միջև,

2. դիմորդի ֆինանսական սպասումների հենքով մշակվել է կրթավճարների ձևավորման գործընթացի վերահսկողության մոտեցում, որը հնարավորություն է ընձեռում բացահայտելու ուսման վարձերի փոփոխության պատճառահետևանքային կապերը՝ ըստ ներքին և արտաքին ազդեցության միջավայրային ազդակների ազդեցությունների,
3. ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացը դիտարկելով ֆինանսական վերահսկողության կտրվածքով՝ առաջարկվել է կրեդիտների արժեքային փոխակերպման համակարգ՝ ուսանող-ակադեմիական հենքով ներկայացնելով հաշվարկային դրամական ներհույքեր և արտահույքեր,
4. առաջարկվել է ըստ պատասխանատվության կենտրոնների գիտակրթական գործունեության անբարենպաստ դրամական շեղումների բացահայտման հաշվապահական հաշվառման տեղեկատվական համակարգ՝ հնարավորություն ստեղծվելով բուհերում իրականացնելու ներկառավարչական հաշվետվողականության կազմակերպում:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Էջ 36-ում ձևակերպված է հետևյալ միտքը. «Անհրաժեշտ ենք համարում համալսարաններում կազմակերպել բյուջետային ծրագրավորում այնպես, որ չափելի դառնա յուրաքանչյուր ստորաբաժանման գործունեության ֆինանսական հատույցը»: Աշխատանքի ոչ այս, ոչ էլ հետագա հատվածներում, ցավոք, առաջարկված չեն նկարագրվածը կյանքի կոչելուն միտված կոնկրետ լուծումներ:
Այսպես, Աշխատանքում ներկայացված են սխեմաներ, որոնք առնչվում են համալսարաններում ծրագրային բյուջետավորման ներդրման այս կամ այն դիտակետին (օրինակ՝ գծապատկեր 1.3.2-ը): Պետք է արձանագրել, որ գծապատկերներում նկարագրված սխեմաները ընդհանուր բնույթ ունեն, զուրկ են կոնկրետությունից, չեն արտացոլում բուհում ծրագրային բյուջետավորման ներդրման առանձնահատկությունները: Նույն կերպ, էջ 41-ում ներկայացված է կրթական ծառայությունների ծախսերի նորմատիվային հաշվառման կազմակերպման շրջանակը: Այն ևս ընդհանուր տեսական բնույթ ունի, դրա նկարագրությանը չեն հետևում սխեմայում

նկարագրված մոտեցումը բուհերում ներդրման կոնկրետ առաջարկներ կամ պատասխաններ այն հարցերին, թե բուհերում դրա ներդրումը ինչպե՞ս պետք է արվի:

2. Բուհերում ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման խնդիրը, իր կարևորությամբ հանդերձ, լուծման ընթացքում բախվում է մի շարք խոչընդոտների, որոնցից առանցքայինը բուհի գործունեության արդյունքի ֆինանսական գնահատումն է: Այս խնդիրը աշխատանքում լուծված չէ, ավելին՝ դրան բավարար չափով անդրադարձ չի արվել: Օրինակ, էջ 54-ում ներկայացված է աղյուսակ, որը կարելի է նկարագրված խնդրին առնչվող ուսումնասիրության արդյունք համարել: Դրանում ֆինանսական ռեսուրսների օգտագործման 4 ուղղություններ են նախանշված, յուրաքանչյուրի մասով կան փաստացի և նպատակադրված արժեքային մեծություններ: Պարզ չէ, թե աղյուսակում ներկայացված թվերը ինչպե՞ս են հաշվարկվել, ի՞նչ մեթոդական մոտեցում է կիրառվել կամ ի՞նչ բուհի օրինակով են դրանք:
3. Էջ 64-66-ում ներկայացված է կրթավճարների հիմնավորման գնահատման մոտեցում, որի հիմքում այսպես կոչված «կորցրած ֆինանսական եկամուտների» հաշվարկման, վարձավճարի այլընտրանքային օգտագործման դեպքում ստացվելիք զուտ օգուտի հետ համեմատությունն է: Այլընտրանքային եկամտի հետ համեմատությունը նոր չէ, այլ համընդհանուր ճանաչում ունեցող մեթոդական մոտեցում է: Այն տվյալ հետազոտությունում գիտական նորույթի կարող էր հավակնել այն դեպքում, եթե հստակորեն նկարագրվեր, թե սովորելու այլընտրանքային ծախսը ինչպե՞ս է հաշվարկվում, նաև՝ հստակեցվեր այն մեթոդական մոտեցումը, թե ինչպե՞ս կարելի է գնահատել բուհում սովորելու վերջնարդյունքը՝ սովորողի տեսանկյունից, բուհում սովորելու օգուտը՝ ավարտելուն հաջորդող 5, 10 տարիների կամ ավելի երկար ժամանակահատվածի համար: Գլխավոր խնդիրն այն, որ օրինակ՝ սովորելուց հետո, 7 տարի անց, նախկին ուսանողը կարող է ստանալ աշխատանքի առաջարկ՝ բարձր վարձատրվող աշխատավարձով, որի չափը մինչև համալսարան ընդունվելու վերաբերյալ որոշում կայացնել, ճշգրիտ գնահատել հնարավոր չէ: Ուստի, առաջարկվող մեթոդական մոտեցումը, տեսականորեն տրամաբանված լինելով հանդերձ, գործնականում կիրառելը գրեթե անհնարին է: Համեմայն դեպս՝ աշխատանքում ներկայացված չեն դրա գործնական կիրառման ընթացքում հնարավոր խնդիրների լուծման տարբերակներ:
4. Աշխատանքի 3.2 բաժինը նվիրված է բուհերում պատասխանատվության կենտրոններով ֆինանսական վերահսկողության կազմակերպմանը: Նախորդ դրույթների նմանությամբ, այստեղ ևս առկա է մոտեցման տեսական նկարագրություն, որի՝ բուհական միջավայրում կազմակերպման առանձնահատկությունները, խնդիրները բավարար չափով

քննարկված, առավել ևս՝ լուծված չեն: Օրինակ, էջ 86-ում նշվում է, որ պատասխանատվության կենտրոններով բուհերում ֆինանսական վերահսկողության կազմակերպումն անհրաժեշտություն է, հաջորդիվ նշելով այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են բուհի յուրաքանչյուր ստորաբաժանման գործունեության ֆինանսական հատույցի գնահատումը և այլն: Վերստին հանգելով նույն խնդրին, այն է՝ հատույցի գնահատմանը, հեղինակը հետագայում դրա լուծումներին բավարար չափով չի անդրադարձնում, արդյունքում արված առաջարկը մնում է տեսական տիրույթում:

5. էջ 95-ում բերված աղյուսակում ներկայացված են ըստ պատասխանատվության կենտրոնների ֆինանսական հոսքերի գնահատականներ, որոնց հիման վրա արվել են որոշ դատողություններ: Շարադրանքից պարզ չէ, թե ինչպե՞ս են հաշվարկվել ներկայացված թվային մեծությունները, ի՞նչ սկզբունքով են հաշվարկվում մասնագիտական և սպասարկող ամբիոնների ծախսերը և արդյոք դրանց մոտեցումներում կան սկզբունքային տարբերություններ, նաև՝ ինչպե՞ս է հաշվարկվում մասնագիտական ամբիոնի եկամուտը կամ էլ կրթական ծառայությունների ֆինանսական եկամուտը: Ի վերջո, այսպես կոչված սպասարկող ամբիոնները ևս նպաստում են եկամտի ձևավորմանը, որի գնահատմանը աշխատանքում անդրադարձ չկա:
6. Ատենախոսության գլխավոր թերությունը, մեր մոտեցմամբ, այն է, որ հեղինակի կողմից առանձնացված գիտական նորույթները, ընդգրկելով բուհերի ֆինանսական կառավարման և կայունության ապահովման գործընթացի արդյունավետության բարձրացման կարևոր խնդիրներ, միաժամանակ բավարար չափով մշակված չեն, լիարժեքորեն հաշվի չեն առնում մասնագիտական կրթության առանձնահատկություններով պայմանավորված ասպեկտները, նաև՝ առաջարկվող լուծումները ավելի շատ տեսական, մեթոդական բնույթ ունեն, հատակեցված չեն դրանց կիրառման ընթացքում հնարավոր խնդիրները, դիտարկված չեն դրանց լուծումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքում մեր կողմից հայտնաբերված թերություններն ու բացթողումները նշանակալի են: Մի կողմից, հետազոտության շրջանակներում հեղինակի կողմից արձարծվել և ուսումնասիրվել են բուհական համակարգում ֆինանսական վերահսկողության համար կարևորություն ունեցող խնդիրներ, դիտարկվել են լուծումներ, մյուս կողմից, սակայն, վերջինները առավելապես տեսական բնույթ են կրում, իսկ դրանց գործնական կիրառման ընթացքում հնարավոր խոչընդոտներն ու բարդությունները պատշաճ կերպով քննարկված չեն:

Չփորձելով թերագնահատել հեղինակի կողմից կատարված զգալի ծավալով աշխատանքը, առաջադրված խնդիրների լուծման ուղղությամբ արված առաջարկների տրամաբանվածությունը, արձանագրելով ի սկզբանե բարդ և դժվար լուծելի հիմնահարցերի հետազոտման ընթացքում ատենախոսի դրսևորած մասնագիտական համարձակությունը, նաև չբացառելով, որ դիտարկվող խնդիրների լուծման առումով հեղինակային մշակումների շրջանակն ավելի խորն է ու կոնկրետ, քան արտացոլված է ատենախոսությունում, կասկածի տակ չդնելով հեղինակի մասնագիտական պատրաստվածության ու կարողությունների մակարդակը, միաժամանակ՝ նկատի ունենալով նաև մեր կողմից վերհանված թերությունները, ՀՀ-ում գիտական աստիճանաշնորգման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի, նաև՝ ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող հիմնական պահանջներին գրախոսվող ատենախոսության համապատասխանության, իսկ հեղինակի՝ Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը արժանի լինելու վերաբերյալ վերջնական եզրակացությունը հնարավոր ենք համարում ձևակերպել մասնագիտական խորհրդում ատենախոսության քննարկման և մասնավորապես՝ վերհանված թերություններին ատենախոսի կողմից տրվելիք պատասխանների ու մեկնաբանությունների գնահատման հիման վրա:

Պաշտոնական ընդդիմախոս
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ա.Ա.Քթոյան

Ա.Ա. Քթոյանի ստորագրության իսկությունը հաստատում են

ՀՊՏՀ գիտական քարտուղար
06.06.2022թ.



Ա.Յ. Գալստյան